

ՎԵՅ ՕՐ Ա. ԹԱՂԵՒ ՎԱՆՔՈՒՄ

(Այցելուի դիտողութիւններից)

I

Վանքի գիրքը—Նրա անցեալից—Նրա կալուածները, զիւղերը—Սիմէռն արքեպիսկոպոսը և նորոգութիւններ:

Բոնութեան աւերող և անխիղճ ձեռքը անցեալի շատ մը-նացորդներ ու յիշատակնեք քարուքանդ է արել, հաւասարեցըրել է հողին, չատ-շատ մնացել են միայն նրանց բեկորները ցրուած զանազան կողմերում։ Բայց ս. Թաղէի փառաւոր վանքը, որի վրայով անցել է դարսրը ամբողջ մի շղթայ, ենթարկուել է աւերումների, նա այժմ էլ կանգնած է որպէս կենդանի վկայ և արթուն կերպով հսկում է շրջակաքի վրայ։ Նա չի կորցրել իր հմայքը և վեհութիւնը. այցելուն մի տեսակ հապատութեամբ է նայում դարերի այս մնացորդի վրայ, և մարդի սիրաը արագ բարախում է, և նա համակւում է մի շարք քաղցըր, պատմութիւնից մնացած յիշողութիւններով։

Այս հաշակաւոր վանքը ծանր նստած է մի փոս տեղ, ձորի մէջ, և երեք կողմերից բարձրանում են լեռները, միայն առաջն է բաց։ Ծանր և մերկ են այդ լեռները. Նրանք կազմում են մի-մի յարմար և ապահով, բայց վանքի համար շատ վտանգաւոր դիրքեր։ Այս դիրքերը բռնուած դէպքում գրեթէ ոչ մի շարժում անհնարին կը լինի վանքի մէջ։ Վանքի պարսպի տա-

կից հոսում է Մակուայ գետի մի փոքրիկ վտակը։ Իսկ վանքի առաջ տարածում է դաշտավայրը։ մեծ և ընդարձակ է այդ հարթութիւնը։ նա ծածկուած է կանաչ, բարձր խոտով և ցորենի արտերով։ Նայում ես, և քամին, բարակ և ախորժենի քամին շընկշնկալէն դաշխայում է կուրծքը և անցնում զնում։ Միշտ էլ կայ այդ քամին, սառն և դուրեկան, և մաքուր կանաչ դաշտավայրը օրորում է ինչպէս ծովի ալիքները։ Բարձր է վանքի շրջակայքի դիրքը, մանաւանդ Խոյ գաւառի հետ համեմատած։ Այժմ թէն յուղիսի 10-ն է, և Խոյ գաւառում հունձը և կալսելը կանոնաւոր սկսուել է, բայց այստեղ ցորենը դեռ կանաչ է։ Ամարանոց է այստեղ, օդը սառն, մրգեր, խաղող և այլն չի հասնում այստեղ։

Իսկ վանքի հարաւային կողմում, լերան լանջում թառած ապրում են մի բուռն հայեր։ Դա մի փոքրիկ գիւղ է, մօտ 30 տուն հայեր, որը թէն կոչում է վանքի գիւղ, բայց պատկանում է Մակուի խաներից մէկին, իզն խանին։

Ահա հէնց այստեղ այցելուն կանգ է առնում և նրա սիրար լցում է տիսուր զգացմունքով։ Վանքի գիւղը այժմ պատկանում է մի խանի, ահա ինչ ծիշտ է, ո. Թաղէի վանքը թէն կանգուն է և պահպանել է իր հմայքը և վեհութիւնը, բայց չունի նա իր անցեալի հռչակը և դիրքը։ Ուր է, չը կայ նրա հին և փառաւոր անցեալը, ուր են այնքան հարստութիւնները և կալուածները, ուր է նրա ընդարձակ իշխանութիւնը։ Այժմ չը կայ զրանցից և ոչ մէկը, և նա վերածուել է մի հասարակ վանահայրութեան։ Ահա այս տեսակէտից շատ տիսուր, շատ անմիթար է վանքի տպաւորութիւնը։

Չը կայ ոչ մի գրաւոր տեղեկութիւն նրա այդ փառաւոր շրջանի վերաբերմամբ, եթէ չը հաշւմնք մի քանի արձանագըր րութիւնները. վանքում չը գտայ և ոչ մի թուղթ այս կամ այն առաջնորդի, այս կամ այն վանահայրի գործունէութեան մասին։ Զարմանալի է, այնքան վանահայրեր են եկել զնացել, բայց ոչ մէկը չի թողել իրանցից յետոյ իր նախորդի մասին մի փոքրիկ և համառօտ տեղեկագիր։ Եւ այցելուն մի բան իմանալու համար ստիպուած գիւղում է գիւղացենների մէջ դեռ վառ պահուած յիշողութիւններին, օգտուում է այս և այն արձանագըրութիւնից։

Արձանագըրութիւններից մենք իմանում ենք, որ վանքը նորոգուել է երկու անգամ։ Վանքի արենելեան մասը, ուր գըտնը ըստում է Թաղէոս առաքեալի վերեղմանը և կազմում է սեղանը և խորանները, չինուած է հայկական ԶՀԸ թւին, այսինքն

մօտ 590 տարի սրանից առաջ. և դրա վերաբերմամբ գտնում
ենք հետեւեալ արձանազրութիւնը.

«Այս տաճար լրուակիր և երկնանման, առկայացել. հաս-
տատապոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրիմին ո. ա-
ռաքելոյս Թաղէոսի, որ ըստ բազմաւսասկ յանցանաց մեր ըզ-
կործանումն էաւ ի շարժէ. իսկ ես նուռաստ սպասաւոր մին,
Զաքարիա եպ. որդի պարոն Մանուէլայ, կարողութեամբ Աս-
տուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութիւն առաւել քան զա-
ռաջինն, ի ժամանակին սաստիկ նեղութեան և հալածանաց
քրիստոնէից, որ և բազում եկեղեցիք քակտին. վասն որոյ ար-
ձանաղբեղաք զիշատակս մեր առ ի յիշատակել զմեղ առաջի
մեծին Աստուծոյ և անարին զենման գառինն Աստուծոյ հան-
դերձ ծնողօք և զարմիւք և զաջորդն մեր աղբաւոր որդին, զաէր
Տիրացուն և զնարազատ եղբայրս մեր զՊետրոս և զՍարգիս,
որք հիմնարկութեան նպաստաւորք եղեն ընչիւք կատարումն:
Թւին ԶՀԷ»:

Իսկ վանքի միւս մասի նորոգութիւնը սերտ կերպով կա-
պուած է երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսի հետ Ա-
մեն մի զիւղացի երկիւղածութեամբ և օրհնանքով է յիշում այդ
անունը, այս անուան հետ կապուած են շատ քաղցր յիշողու-
թիւններ: Սիմէոն արքեպիսկոպոս համարում է ամենալինա-
րարը, նա է շինել վանքի արեմտեան մասը, որը կազմում է
ամբողջ վանքի-տաճարի մեծագոյն բաժինը: Սպիտակ և յղկուած
քարերից է շինուած այդ մասը, կանգնեցրած են հաստ և կա-
յուն սիւներ և դրսի կողմից, պատերի վրայ քանդակուած են
առաքեալների պատկերները, զանազան տեսակի կենդանիները:
Մի տեղ ահա կռւում են երկու առիւծներ, մի ուրիշ տեղ հը-
րեւակն է յաղթական կերպով կանգնած, վանքի մուտքի ա-
ռաջ, սիւների վրայ զոյտ առիւծները... թէն այնքան նուրբ չեն
այդ քանդակազործութիւնները, բայց շատ կոպիտ էլ չեն, և
պէտք է ենթազրել, որ ահազին աշխատանք և ծախս է զործ
դրուել:

Բացի այդ քանդակագործութիւններից, պատերի, ամեն
մի սեան վրայ կան արձանազրութիւններ, ուր յիշատակուած
են, թէ այս սիւնը, այս քարը, ով է տուել եալին: Տաճարի ըս-
պիտակ մասի վրայ եղած արձանազրութիւններից գրեթէ իւ-
րաքանչիւրի մէջ յիշատակուած է Սիմէոն արքեպիսկոպոսի ա-
նունը: Ի միջի այլոց տաճարի առաջ դրան վրայ գտնում է
մի արձանազրութիւն, որը անհրաժեշտ եմ համարում առաջ
ըերել, որովհետև վերաբերում է արեմտեան մասի շէնքին, չը
նայած մի երկու բառ որոշ չի կարդացւում:

«Սրբազն Սիմէռն արքեպիսկոպոսիս սրբոյ Էջմիածնեղի, երբեմն աթոռակալ տէրութեան (մի բառ չի կարդացւում), նստուղին յաթոռոյս առաջնորդ, շինեցաւ շնորհիւ Ամենակալին Աստուծոյ ջքնեղ գեղ (որոշ չէ) և լուսակիր տաճարս և զանգակատունս ի հիմանէ կարի աշխատութեամբ և հոգածութեամբ առաջնորդ Սիմէռն արքեպիսկոպոսիս, յիշատակ և ծնողացս Մուրատին և Գայիհանին *»:

Ինչպէս այս, նոյնպէս և այն բոլոր արձանագրութիւնները, որոնց մէջ յիշատակուած է Սիմէռն սրբազնի անունը, կրում են ՌՄԿ հայկական թուականը, շատ-շատ մի երկու տարով աւել կամ պակաս: Ուստի սրանից կարելի է, կարծում եմ, ևնթադրել, որ Սիմէռն սրբազնը առաջնորդ է եղել Արտադդաւառում XIX դարի սկզբներում:

Բացի տաճարի նորոգութիւններից, Սիմէռն արքեպիսկոպոսը շինել է վանքի բակում առաջնորդարան, զանազան խուցեր, որովհետեւ նրա ժամանակ, ինչպէս և առաջ, բացի առաջնորդից եղել են և վարդապետներ, ուրիշ խօսքով վանքը եղել է մի միաբանութիւն: Այդ թւականներին թագաժառանգ է եղել Ատրպատականում Նայիր Սալթանէն, Արած շահը, և մինչև այժմ էլ յոյց են տալիս այն խուցը, ուր մի անգամ դիշերել է թագաժառանգը: Թէ առաջնորդարանը և թէ միւս շնչերը ամբողջապէս քարից են շինուած: Շատ է ծախսուած անշուշտ, մեծ աշխատանք գործ դրուած, բայց չենքերը շատ հասարակ են, շատ ցածր, խոնաւ, մութ, գրեթէ միանգամայն անյարմար բնակութեան համար: Բայց այդ մասին մանրամասն յետոյ:

Սիմէռն արքեպիսկոպոսի ժամանակ, ինչպէս և որոշ ժամանակ նրանից յետոյ. ս. Թաղէի վանքը համարւում էր Ատրպատականի առաջնորդարանը բաւականին յետոյ միայն առաջնորդարանը փոխուեց Թաւրիդ: Հարուստ, միանգամայն ապահով էր նկրթականի կողմից Ատրպատականի առաջնորդարանը: Արտազ գաւառը, ինչպէս և ամբողջ Ատրպատականի նահանգը վեն էր հայերով, ստացւում էր առատ հասոյթ, բացի այդ հասոյթից վանքը—առաջնորդարանը ունէր իր սեփական գիւղերը և կալուածները, որոնցից ստացւուած արդիւնքը կարող էր լիուլի բաւարարութիւն տալ թեմի բոլոր պահանջներին: Նա ուրիշ խօսքով եղել է մի հարուստ և ընդարձակ միաբա-

* Արձանագրութիւնների մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները թող թերթեն «Արարատ», 1898 թւի համարները. Խաչիկ վարդապետը գրեթէ բոլոր արձանագրութիւնները առաջ է բերել:

նութիւն, իր բոլոր պարագաներով և յարմարութիւններով, Վանքը ունեցել է թւով 15 զիւղ, որոնք գտնուում են Մակու և Խոյ դաւասներում, և մինչև այժմ էլ այդ զիւղերի վերաբերմամբ—որպէս վանքի սեփականութիւններ—եղած բոլոր վաւերազգերը —ֆիրմանները պահուում են Էջմիածնում, իսկ անունները ես կարողացայ ստանալ ներկայ վանահօրից։ Ահա նրանք.

1) Մըզրա, արևմուտք, վանքից 4 ժ. հեռաւորութեան վրայ։

- 2) Խւմրի-դաշ, արևելք, 3—4 ժ.։
- 3) Ղարաքիլիսա (վանքի զիւղ), կպած է վանքին։
- 4) Դիսլակ-դաշ։
- 5) Ազրուլաղ։
- 6) Ղարաթուլքի, արևելք, $\frac{1}{2}$ ժամ։
- 7) Սոնա-բուլաղ, հարաւ, $1\frac{1}{2}$ ժ.։
- 8) Ազդաշ։
- 9) Մահլաղան, Խոյ գաւառում։
- 10) Ղորուղ, վանքից 3 ժամ հեռաւորութեան վրայ։
- 11) Նուշիկ, մէկ օրուայ ճանապարհ։
- 12) Քեռինեղան, Խոյ գաւառում, Սէյդաւարի մօտ։
- 13) Չորս, մօտ Շուրուկ. Մակւում։
- 14) Ռահան, հարաւ, 1 ժ. հեռ. վրայ։

Այս 14 զիւղերից զատ, վանքը ունեցել է զանազան տեղերում մի արտ, մի այգի, մի տուն և այլն, ինչպէս օրինակ՝ Դիզա զիւղում (Խոյ գաւառ) ունէր մի տուն և մի այգի, Զորս զիւղում (բաստի հողը, Փեռա զիւղի մէջ մի անտառ, Խոյ քաղաքում մի այգի և տուն (այգու մէջ է այժմ շինած եկեղեցին և դպրոցը), Հափթվանում (Սալմաստի դաւառ) մի քանի արտեր, Խոյում, ինչպէս և Մակւում ունեցել է մի քանի ձիթհան դործարաններ, Եւ այս բոլոր կալուածների՝ համար կան այժմ «զարայաններ»։ Բայց արդեօք այդ վաւերաթղթերը և ֆիրմանները ունեն այժմ այնքան զօրութիւն, որ հնարաւոր լինի յետ ստանալ կալուածները, այդ թողնում եմ Էջմիածնին մտածելու Բայց յամենայն դէպս այս բոլորը պարզ ցոյց է տալիս, թէ ժամանակին վանքը որքան հարստութիւն, որքան կալուածներ և զիւղեր է ունեցել։

Բացի վերև առաջ բերուած զիւղերից և սեփականութիւններից՝ վանքը ունէր լծկան մի քանի զոյգ եղներ և գոմէշներ, գութաններ, սայլեր, ջրաղաց, նախիրներով տաւար, հօտերով ոչխարն էր դուրս գալիս վանքից։ Որ իսկապէս վանքը ունեցել է մի քանի հօտ ոչխարներ, որպէս փաստ կարող է ծառայել և այն, որ վերոյիշեալ վաւերաթղթերի մէջ յիշատա-

կուած է, թէ վանքը ունէր զանազան լիոներում երեք ռմա-
դալութիւն տեղեր:

— Զանմ, առանձին շեշտով նկատեց գիւղի ուս Թաթոսը,
ուրիշ բան է եղել մեր վանքը, ամրող մի գիւղ, ինչքան մար-
դիկ են լիացել նրա սեղանից:

— Հէյ գիտի երանելի ժամանակ, հառաջեց գիւղի տէր-
տէրը: Էն ժամանակները, վարժապետ ջան, ուրիշ բաներ էին,
էլ էն օրերը չենք տեսնելու. մենակ երեսուն, բառասուն հո-
տաղ ունէր, էդքան էլ անտեսների էս խուցերը տենում ես,
ստրանք լիքն էին վարդապետներով: հէջ հաշիւ կար, վարժա-
պետ, մեր վանքի գեալուլին էյ, էլ էնենց բան տեսնալու չենք,
թող փիս մարդի տունը քանդուի:

Գիւղի բոլոր մարդիկ մի տեսակ յափշտակութեամբ և միեւ-
նոյն ժամանակ հպարտութեամբ են պատմում վանքի այդ փա-
ռաւոր շրջանի մասին: Այդ յիշողութիւնները անցնում են բերնէ
բերան, սերնդից սերունդ և շատ վառ, շատ թարմ պահպան-
ուում են ժողովրդի մէջ, Ամենքը գիտեն այդ. պատմում են միշտ,
առանց ձանձրանալու, պատմում են որպէս մի նոր գէպք, որ-
պէս մի օրուայ յիշողութիւն լինի: Վեց օր մնացի նրանց մէջ,
վանքում, բայց նոյն պատմութիւնը մի քանի անգմ լսեցի. գա-
լիս, նստում են վանքի պատի տակ և սկսում զրուցել, խօսել
վանքի երանելի ժամանակներից: Ամենահետաքրքիրը այդ պատ-
մութիւնների մէջ գիւղացիների ողնորութեան և յափշտակու-
թեան շեշտն է, որ նկատելի է բոլորի մէջ, և մարդ լսում է
սրանց առանց յոգնելու կամ ձանձրանալու, որովհետև նրանք
հոգի, կեանք են դնում պատմութիւնների մէջ:

— Տէր հայր, այդքան որ պատմում էք նոյն բանը, բը չէք
ձանձրանում, գիւնեցի ես:

Բոլորի դէմքերին երեսց մի ուրախ ծիծաղ:

— Է՛հ, տնաշէն, ձանձրանալս ո՞րն ա: Ես չորս քսան և
կինդ տարեկան եմ, բայց միշտ էլ պատմել եմ, իսկի ձանձրա-
նայ կայ: Ուէս, տարեկան քանի անգամ եմ պատմում:

— Ես ինչ գիտեմ, տէրտէր: Պ. վարժապետ, օրեկան եր-
կու անդամ հաշւիր դնայ, դեռ քիչ եմ ասում:

— Էտենց ա բ՞ը, ես եմ գիտում է, հաշւել չի լինի, ջանմ,
ժպտալով վրայ բերեց տէրտէր:

Օրիժինալ և հետաքրքիր են գիւղացիների զրոյցները, նրանց
յիշողութիւնները. մենք այդ կը լսենք կամաց-կամաց, ասաի-
ճանաբար: Սյօմ մենք անցնենք բուն ինդրին:

Մի փոքր վերի ասացի, որ այդ ժամանակ Ատրապտականի
առաջնորդարանը ո. Թաղէի վանքն էր. այս միայն մի քանի

տասնեակ տարի է, որ առաջնորդարանը փոխուել է թաւրիզ: Վանքում նստած առաջնորդը ոչ միայն համարուում էր հոգևոր պետ Աստվածականի հայ ժողովրդի համար և հոգեոր գործերն էր վարում, այլև նա համարուում էր միենոյն ժամանակ աշխարհիկ պետ: Նա էր զեկավարում հոգեոր, հասարակական և քաղաքական խնդիրները: Ճիշտ է, այժմ էլ նոյն իրաւունքները վայելում են Աստվածականի առաջնորդները, բայց առհասարակ թոյլ են դանւում և չեն կարողանում լիուլի օգտուել իրանց ընդարձակ իրաւունքներից. իհարկէ՝ մեր խօսքը բացառութիւնների մասին չէ:

Այն շրջանում, անցեալում Աստվածականի թեմը, զանազան յիշողութիւնների և վանահօր տուած տեղեկութիւնների վրայ հիմնուած, աւելի մեծ և ընդարձակ է եղել, առաջնորդի իրաւուութիւնը շատ հեռուն էր տարածւում, քան այժմ է: Դեռ սուսապարսկական պատերազմից առաջ Աստվածականի թեմի վրայ էր Սուրբմալուի ընդարձակ գաւառը, Բայազէտը, Աղբակը, Բարդուղիմէսաի վանահայրութիւնը: Այս բոլորը մի կողմից, իսկ միւս կողմից էլ նրա իշխանութիւնը դէպի Պարսկա-Հնդկաստանի թեմը աւելի հեռուն, աւելի լայն չափով էր տարածւում:

—Եւ իսկապէս, նկատեց վանահայրը, այն ժամանակ եղել է մի մեծ թեմ, ընդարձակ իրաւունքներով, հայաշատ, հարուստ կալուածներ, առատ արդիւնք, իհարկէ՝ այդպիսի պայմանների մէջ կարող էր վանքը բարգաւաճել, դիրք և փայլ ստեղծել իր համար: Բայց ինչ կայ այժմ. գրեթէ ոչնչ. այժմ վեր է ածուել միայն մի խեղճ վանահայրութեան չորհիւ մի շարք պատճառների:

Բայց այժմ անցնենք այդ «մի շարք պատճառներին»:

II

Հայերի գաղթը—Կողոպուաներ թիւքերի և քիւքերի կողմից—Առաջնորդարանի տեղափոխութիւնը:—Եսայի վարդապետ և ուրիշ վանահայրեր:

Վրայ է համում 1828 թւականը: Տեղի է ունենում ռուսական պատերազմը, իսկ այս պատերազմի անմիջական հետեանքը և արդիւնքը լինում է պարսկահայերի գաղթը: Աստր-

պատականի ընդարձակ և հայշատ նահանգը կամաց-կամաց, օր-աւուր սկսում է դատարկուել Ամբողջ Արտազ գաւառը, այժմ և ան Մակուի խանութիւնը, որը բանուած էր գրեթէ միմիայն հայերով, և միակ հայերն են եղել տիրողները, տարեցարի նուազում է գաւառը, հայերը զաղթում և բնակութիւն են հաստատում կովկասի և Ռուսաստանի զանազան մասերում:

Հարուածը շատ մեծ էր թեմի համար: Ատրպատականի առաջնորդարանի—վանքի գիրքը խախտում է: Նրա հեղինակութիւնը թուլանում և իջնում է իր բարձրութիւնից: Ամբողջ թեմը կորցնում է իր ուժը հայերի պակասելու պատճառով:

Բացւում է կողոպուտների և աւարառութիւնների մի լայն ասպարէզ, Պարսկա-տաճկական սահմանագլխի սարերի վրայ թառած քիւրդերը ախորժակները բացած և ժանիքները սրած յած են գալիս իրանց բարձրութիւններից, և առանձին-առանձին հրոսախմբեր կազմում, յարձակում են հայաբնակ զիւղերի վրայ և զարկում տանում: Թալան-թառաշլ քիւրդերի պապենական և միննոյն ժամանակ սրբագրոծուած սովորութիւնն է: Քանի՞-քանի անգամ քիւրդերը յարձակումներ են գործել վանքի վրայ, աւար, թալան վերցրել և հեռացել: Նրանց յարձակումները, այս վերջին 10—15 տարիներում աւելի յաճախակի էին տեղի ունենում և աւելի վայրագ բնաւորութիւն էին կրում, այդ էլ պիտի բացատրել մեր կեանքում տեղի ունեցած ցյայտնի դէպքերով: որ մի տեսակ դժգոհութիւններ առաջ բերին և լարնցին քիւրդերին հայ ազգաբնակութեան դէմ, կամ աւելի ճիշտ է ասել, որ քիւրդերի վերաբերմունքը մի փոքր խըստացրին, քանի որ առանց այդ ցյայտնի դէպքերին էլ հաշո չէին հայերի հետ, և միշտ էլ յարձակումներն անողական էին:

Այս այսպէս լինելով հանդերձ հէնց այդ քիւրդերը գալիս են վանք ուխտի, այն էլ ընտանիքներով, մեծ խմբերով: Գուցէ առարկի ընթերցողը, թէ նրանք գալիս են, որ ցերեկով ծանօթանան վանքին, տեսնեն նրա ոյժը, ճանաչն մօտիկից, թէ նրանց վերաբերմունքը կեղծ է, շինծու: Բայց չեմ կարծում: ինչպէս նաև ուրիշներն են պատմում, նրանք, այդ վայրնի քիւրդերը մօտենում են վանքին մեծ երկիւզածութեամբ, մաքուր, անկեղծ սրտով: Բայց դժուար թէ հասրաւոր լինի մի կերպով հաշտեցնել այս երկու ծայրայեղ—թալանել և պաշտել —և իրար հակասող վերաբերմունքները, թէն իրական կեանքը երկուսի վերաբերմամբ էլ տալիս է անթիւ և կատարուած փառաեր:

Հետաքրքիր է այս էլ յիշատակել, որ վերջին 3—4 տարիներում վանքը ապահով է եղել և միանգամայն ազատ քիւրդական յարձակումներից, եւ հայերին աջողուել է վերացնել քիւրդական յարձակումների և բարեկամական յարձակումներից, ստեղծելով Այդ աջողուել է, ինարկէ, մեծ դժուարութեամբ և տարիների ընթացքում, այն էլ միմիայն Կարէինի և նրա շրջակացում եղած քիւրդերի հետ, որոնց պետն է Մուստափա բէյը, որն այժմ մի քանի կալուածական խնդիրների առիթով միանգամայն լարուել է Մակուք սարդարի դէմ և գուցէ, ինչպէս լուս ենք, շուտով մի խիստ կռիւ տեղի ունենայ այդ երկու պետերի մէջ: Մուստափա բէյը պատրաստութիւնների մէջ է, և նրան աջողուել է իրան միացնել և մի քանի մանր ցեղերի *):

Այսպէս ահա, քիւրդերի յարձակումները, ալան-թալանը մի կողմից, ասես այս հերթի չէր, միւս կողմից էլ թիւրք խաներն ու բէզերն են գալիս, իրանց ժողովրդի հետ միասին էլ աւելի վատթարացնելու. հայ ազգաբնակութեան վիճակը, էլ աւելի դառնացնելու նրա կեանքը: Ատրպատականի, ինչպէս և Արտազ գաւառի գատարկ և բացուած տեղերը լցուում են թիւրքերը, տարէցտարի այնքան են լցուում, որ կազմում են ազգաբնակութեան մնացոյն մասը: Բնականաբար նրանք սկսում են մի շաբթ ոտնձգութիւններ հայերի վերաբերմամբ, երկրի իշխանութիւնը և կառավարութիւնն անցնում է նրանց ձեռքը, սկսում են ճնշել և հալածել հայ ժողովրդին, աչք են տնկում վանքի կալուածների և սեփականութիւնների վրայ և կամաց-կամաց, ժամանակի ընթացքում աիրում են այդ բոլորին: Եւ մէկ էլ յանկարծ սթափուում է վանքը, նայում է շուրջը, մնում է զբրեթէ ոչինչ, աեսնում է միմիայն ամայի և դառն իրականութիւնը:

Ասես հէնց այդ ժամանակներում, այդ ցաւալի իրականութեան միջացին Ատրպատականի առաջնորդարանի տեղափոխութիւնը գալիս է հռչակաւոր վանքի անկումը էլ աւելի արագացնելու և կատարեալ կացուցանելու: Իրերի այդպիսի խառն վիճակում, որ անհրաժեշտ էր մի ուժնդ ձեռք, շատ

*): Հէնց վերջին պահուն, երբ արդէն յօդուածո բոլորովին պատրաստ էր, նամակ ստացոյ Կարէինից, որ Մուստափա բէյի մարզիկը յարձակուել են Կարէինի մի ջրաղացի վրայ, կարել են չորս քիւրդի գլուխ և էլի գիշերով բարձր ըացել լեռները: Այժմ բէյը եր էլուզ գտնում է սարերի վրայ: զբութիւնը շատ անապահով է և խառն:

մօտիկից հսկող մի զօրեղ առաջնորդ՝ վանքը անկուսմից պահպանելու, յանկարծ և ղածն էլ հեռանում է: Թէ ճիշտ որ թւին է եղել առաջնորդարանի տեղափոխութիւնը ո. Թաղէի վանքից թաւրիզ, յայտնի չէ գոնէ ինձ համար, ոչ էլ հնարաւորութիւն ունեմ ստուգելու, բայց այսքանս պարզ է, որ այդ տեղի է ունեցել մօտ քառասնական թւականներին և Սահակ եպիսկոպոս Սաթունեանի օրով, որին գիւղացիք Սաթունով են կոչում:

—Զէ, ջանմ, վիճում են գիւղացիք, երբ տէրտէրը ձայնը բարձրացրեց. ևս էնպէս եմ յիշում սրբազն Սաթունովին, ասես երեկ լինի Նա վախաւ, գնաց Սալմաստի, թաւրիզի կողմերը որպէս թէ պտուղը հաւաքելու, մնաց թաւրիզ, էլ չ'եկաւ, եդ կը լինի դուզ Յ քսան տարուայ խօսք, կամ հինգ տարի դրանից պակաս. Էն ժամանակ, պ. վարժապետ, ես քո հասակի կը լինէի հա...

—Հա, էղպէս կը լինի. 60 կամ 55 տարի սրբանից առաջ, նկատեցին ուս Թաթոսը և մի ծերունի:

Թիւրդերի և թիւրքերի կողոպուտները և ասպատակութիւնները, առաջնորդարանի տեղափոխութիւնը և պարսկահանուրի գաղթը վանքի վիճակը դարձնում են անմիտթար և աննախանձերի. պակաս մնացած տեղն էլ գալիս են լրացնելու վանքի վանահայրերը: Իրար յետուից դալիս են մի քանի վանահայրեր, մէկը միւսից ապիկար, մէկը միւսից ընչափաղ և խայտառակ, ծզմում, հիւծում են հարուստ վանքը և թողնում են դատարկ և չոր քարերը, որոնք ողբում են ցաւալի իրականութիւնը: Մարդ ակամայ մտածում է, լաւ է որ քարերն էլ չեն կերել.

—Ե՞հ, վարժապետ, սրտի խորքերից հառաչեց տէրտէրը, փիս մարդոկ էին մեր վարդապետները, փիս, այ նրանց տունը քանդուի, ինչպէս մեր վանքը քոյլորովին քանդեցին:

—Տէր հայր, դիմեց վանահայրը, Եսայի վարդապետի պատմութիւններից արա, որ պ. Երուանդը լսի:

Տէրտէրի երեսը փայլեց, և սկսեց իրան հաւաքել, որ սկսի:

—Ե՞հ, պ. վարժապետ, էնքան պատմելու բաներ կան, չը գիտեմ որը պատմեմ: Եսայի վարդապետ, այ նրա օջապը այրուի, ասում եմ. Եսայի վարդապետը Յ9 տարի էստեղ հայր սուրբ էր (պէտք է հասկանալ վանահայր): Էն ժամանակ էլ վանքը շատ հարուստ էր, ունէր լծկան եղներ, գոմէշներ, կըթան կովեր և մատակներ, մի քանի սայլեր, գութաններ, սուրուններով ոչխարներ և նախիրներով տաւար, ջրաղաց, ինչ գը-

լուխտ ցաւացնեմ, շատ մեծ հարստութիւն, բայց էղ տնաքանդ վարդապետը ամենը տկանց արեց բոլոր...

Լոեց նա, զգուշութեամբ նայեց շուրջը, գլուխը մօտեղրեց ինձ, խորհրդաւոր կերպով և ցածր ձայնով փսխաց. «բոլորը տնաւեր հայր սուրբը լցրեց իր աղօր տունը, որը հէնց հիմայ էլ մեր գեղումն առ: «Բ'ը, էաւենց ա հա», բարձրացրեց ձայնը տէր հայրը և ժայխառ երեսին նայեց ոչս թաթոսին և վանահօրը:

—Ոչ միայն այդ, աւելացրեց վանահայրը. ինչպէս պատմում են, գողացել է նաև վանքի իրերից, ինչպէս խաչ ևայլն, և իսկապէս այժմ դրանցից շատերը չը կան: Այժմ նրա բարեկամը մեծ հարստութեան տէր է:

—Հ'ըմ, քմծիծաղ տուեց ոչս թաթոսը և ձեռքը ամուր խփեց վանքի պատին.—սարա զօրութեանը մեռնեմ, իսկի կը թողնի, որ իր չոփը հալալ ուտեն, քթներից դուրս կը բերի: Ինչպէս երեսում է հայր սուրբը բանի եղելութիւնը դեռ չի իմացել:

—Ոչ, ինչ է պատահել:

—Ե՞նչ է պատահել, երեք-չորս օր առաջ Աւետիսից (Եսայի վարդապետի բարեկամը) գողացել են փողերը, ասում է ինքը, որ եղել է 28 հատ տաճկական ոսկի, 30 հատ ոռուսական տաս մանէթանոց, 200 մէկ մանէթանոց, դեռ ուրիշ բան էլ կայ, բայց չի ասում:

—Էդպէս էս մեր վանքը ոչ մէկին անպատիժ չի թողնում, վրայ բերեց մի գիւղացի և խաչակնքեց երեսը:

Սոհասարակ այստեղի ժողովուրդը շատ երկիւղածութեամբ է վերաբերում գէպի վանքը, եղել են ղէպեր, որ յանցաւորները պատիժ են կրել, այս կամ այն կերպ վնասուել են, և ժամանակի ընթացքում այդ հաւատքը աւելի ու աւելի արմատացել է ժողովրդի մէջ: Նոյն այդ երկիւղածութիւնը և հաւատը նկատելի է և թուրքերի մէջ: Թէս ես վեց օր մնացի վանքում, բայց մի քանի անգամ թուրքեր եկան վանք ուխտի. Նրանք աւելի հաւատում են, մօտենում վանքին, քան հայ գիւղացիները: Մեծ հաւատ ունի մանաւանդ Մակուի այժմեան սարդարը և մի քանի անգամ առաջարկել է, որ իր ծախսով մի բան շնուրի վանքում, որպէս իր հաւատի նշան: Շատ անգամ թուրքերը նախատում են հայերին և ասում: «զուք ունէք շատ զօրաւոր վանք, կարող սուրբ ունէք, բայց չէք կարողանում նրան արժանի կերպով պատելու»:

Ինչ որ է. գալով եսայի վարդապետին, պիտի ասեմ, որ ոչ ոք մի լաւ յիշողութիւն չը պատմեց նրա 39 տարուայ կեանքից: Բոլոր գիւղացիների բերնից անէծք, միայն անէծք էր Օգոստոս; 1903.

լուսում նրա հասցէին, Սիմէսն արքեպիսկոպոս և Եսայի վարդապետ, այս երկու անձնաւորութիւնները հակապատկեր են ներկայացնում զանգի տարեգրութեան մէջ: Մէկը որքան շինարար, միւսը նոյնքան աւերող, մէկը այժմ սուրբի հռչակ ունի ժողովրդի մէջ և միշտ էլ փառաբանուում է, իսկ միւսը մի սկիծ է կազմում վանգի տարեգրութեան մէջ, և անէծք է թափւում նրա զլիին:

—Հէնց բոլոր վանահայրերը որպէս աւերող և թոյլ են եղել, զիմեցի ես:

—Հա, պ. վարժապետ, վրայ բերեց մի զիւղացի, շինարար հայր սուրբ շատ քիչ ենք ունեցել, բոլորն էլ կերել, փըշացրել են:

—Յիշում ես, տէրտէր, Փիլիպպոս հայր սուրբին, սկսեց ոչս Թաթոսը. նա շատ ֆաղիր (լսեղճ) մարդ էր, անճար, ուտել էր չը զիտէր: Ամբողջ օրը փակուած էր ներսը. նա մընում էր այ էն օթախում, լսեղճը էնքան էր մնում փիս օդի և ծխի մէջ, որ զլուխը գժուում էր, և չէր կարողանում դուրս գալ, յետոյ մենք էինք քաշում դուրս հանում: Քանի անգամ հազարուխը լսիել է էն դրան քարերին, և ուտել է:

—Ե՞՞հ, նա շատ անճար ե զողորմնի մարդ էր, աւելացրեց տէրտէրը. նա թէն շատ թոյլ էր, անպէտք, բայց էնքան վասս էլ չէր տալիս վանգին: Էտենց վարդապետներ ենք ունեցել. տեսնում ես, վարժապետ, էն շինութիւնները (նա ցոյց է տալիս գոմերը, մարազը ևայլն), դրանց բոլոր գերանները քանդել, հանել և վառել են. այ էտենց վարդապետներ ենք տեսել: Տնաւերները հէջ իրանց ետին օրուայ մասին չէին մտածում, միայն քանդում, աւերում և ուտում էին, էն էր մնացել, որ պատերն էլ ուտէին: Իսկ Բաղունին-Մազունին, ամենին էլ մատներիս պէս ճանանչում եմ. ոչ մէկն էլ բարի պտուղ չէր, մանաւանդ էդ Բաղունին, էս էլ ասեմ, պ. վարժապետ, որ էդ Բաղունին լաւ հայ էլ չէր, շատ ալա-բալա (կասկածելի) էր երեսում մեր աչքին:

—Զէ, տէրտէր, ժպիտով նկատեց ոչս Թաթոսը, մեր վարժապետը, ինչպէս երեսում է, լաւ ականջ ունի, լաւ լսող է:

—Հա, լրեսում ա, մենք էլ հէնց էտենց մարդի ենք ման գալիս, դեռ էնքան պատմութիւններ կան. էսօր էսքան հերիք ա:

Գիւղացիները ոտքի կանգնեցին և մէկ-մէկ, իրար յետերից հեռացանք. ևս մնացի հազար տեսակի ճնշող պատմութիւնների և զրոյցների աշխարհում:

III

Վանքի արդի վիճակը. Բնչ էր մնացել. այժմեան վանահայրը և բարենորոգումներ. ուրիշ մնացորդներ:

Բազունի վարդապետից յետոյ վանքը կարճ ժամանակ համարեա թէ թափուր մնաց. կառավարում էր մի աշխարհական մարդ, որից անմիջապէս յետոյ նշանակւում է այժմեան վանահայր՝ Գէորգ ծ. վ. Նալլանդեանը: Այնպէս որ այս մօտաւորապէս երկու տարի է, գուցէ և մի քիչ աւելի, որ ո. Թադէի վանահայրութիւնը յանձնուել է Գէորգ վարդապետին:

Բայց ինչ գտաւ նա վանքում, երբ նա եկաւ, ունէր վանքը գէթ ապրելու միջոցներ:

Իրականութիւնը շատ տիսուր էր, նոյնիսկ սպանիչ: Զը կար կալուածներից և ոչ մէկը. դեռ այդ ոչինչ, Զը կային լըծկան գոմէշներ կամ եղներ, որպէսզի վարուցանքն սկսուի, չը կար սայլ և գութան, աւերակ էր դարձել և ջրաղացը: Եղած մի քանի հատ կովերը և ոչխարները չեն տալիս բաւարար բան, ցորեն գրեթէ չը կայ: Ահա այս աստիճան յուսահատական էր երկրի դրութիւնը: Գէորգ վարդապետը ստանձնում է պաշտօնը, գալիս է վանք, տեսնում է դառն իրականութիւնը և բոլորովին շշմում և շվար է մնում: Ամբողջ շաբաթներ են գալիս ու անցընում, և հնարաւորութիւն չ'ունեն մի տաք կերակրի երես տեսնել, շատ անդամ ցամաք հացով են օրեր սպանել:

Սյս ապրուսաք. իսկ ինչ էր ներկայացնում վանահօր բընակարանը: Շատ հետաքրքիր է այդ խուցը, Դա մէկն է այն սենեակներից, որ շինել է Սիմէոն արքեպիսկոպոսը սրանից մօտ 90 տարի առաջ, թէև յանցանք է այդ խուցերին սենեակ անուն տալը: Ցածլիկ և խոնաւ են այդ խուցերը. դեռ այդ, ասենք, տանելի է. ապա ողորմելի և խղճուկ լոյսը: Վանահօր խուցը, որը համարւում է առաջնորդարան և ամենալաւը, երբ մարդ խարիսխելով մանում է, մի քանի բոպէ ոչինչ չի կարողանում տեսնել, սպասում, սպասում է և յետոյ հնարաւոր է լինում նշմարել խուցի իրերը: Եւ այդ ասում ենք առանց ծայրայեղութիւնների մէջ ընկնելու: Դեռ սա համարւում է ամենալաւը, հասկանում էք: Այդ խուցը ստանում է լոյսի մի քանի ողորմելի շողեր—ճառագայթներ իր խեղճ ու կրած յուսամուտ-

ներից, Երկու հատ են այդ զլուսամուտները և դրանք բանում են, գիտէք ինչքան տեղ, միմիայն, այս, միմիայն մի-մի քառակուսի ոտնաշափ տարածութիւն: Եւ սա ամենից ընարելին է, չը մոռանաք: Սրանք մի-մի խիստ հեգնութիւններ են, Այս էլ ասեմ, որ միայն վանահօր խուցի զլուսամուտները ունեն ապակիներ, այն էլ ներկայ վանահայրն է գցել տուել, միւսները այդ բախտից էլ զրկուած են: Փոշի, անձրև անարգել լցւում են ներս. կամ հակառակ դէպքում պիտի շորով բռնեն, այն ժամանակ լոյսի կողմից էլ աւելի անտանելի կը դառնայ:

Մի խօսքով միանգամայն անյարմար և միասակար են ապրուստի համար, խոնաւ օդը մարդի խեղդում է և իսկոյն մարդ բևմատիզմ կարող է ստանալ: Զարմանալի է, այնքան ծախս է արուած, ահազին աշխատանք գործ են դրել և շինել են այսպիսի անպէտք բնակարաններ, կրկնակի զարմանալին այն է, որ այնքան վանահայրներ են եկել և գնացել, բայց ոչ չի մտածել՝ իր համար մի կարգին բնակարան շինել, այլ միայն ոյժ են տուել շորթելուն: Ահա ձեզ հսկայ անհոգութիւն և անտարբերութիւն:

Բայց գեռ այս չէ ամենը խուցերի վերաբերմամբ, ամենահետաքրքիրը մնում է: Մի գիշեր, ընթրեկի միջոցին նկատեցի, որ ապիտակ թեփի է թափուում առաստաղից հացի վրայ: Ըսդհատեցի ճաշել և սկսեցի նայել վեր:

—Ի՞նչ էք նայում, հարցրեց ժպտալով վանահայրը, դա փառ տախտակի թեփին է: Ահա այսպիսի օրեր ենք քաշում, պ. Երուանդ:

Եւ իսկապէս. ես ուզեցի ստուգել այդ, հովանոցի ծայրով կամացուկ չօշափեցի տախտակը, և յանկարծ կոտրուեց և ընկաւ մի կտոր փառ, միանգամայն լիսկուած, քըքրուած տախտակ:

—Բոլորն էլ այդպէս է, նկատեց Գէորգ վարդապետը, իզուր տեղը ձեռք մի տուէք. միշտ էլ թափուում է, չըք տեսնում, մի քանի տեղ նոր տախտակներ եմ դրել:

Կրկին յիշեցնում եմ, չը մոռանաք, որ սա ամենալաւն է: Եթէ այս բնլորի վրայ աւելացնենք և այն, որ տաճարի այս կամ այն մասը աւելացնել, փուլ էր եկել և անհրաժեշտ էր նորոգութեան, կարծում եմ, պատկերը այլս թերի կողմ չի ունենայ:

Ահա ինչպիսի ողբալի վիճակի մէջ էր ս. Թադէի հոչակաւոր վանքը, երբ Գէորգ վարդապետը ստանձնում է նրա վանահայրութիւնը:

Նա թէն սկզբում շվարում է տեսնելով վանքի թշուառ

դրութիւնը, բայց յետոյ սթափւում է և սկսում է կամաց-կամաց գործել, ՀՀնց առաջին անգամ նա ձեռնարկում է ջրաղացի խնդիրը, և նրան կարճ ժամանակում աջողուում է վերաշինել ջրաղացը, որն սկսում է կանոնաւոր գործել Խոկ այդ ահագին ապահովութիւն էր վանքի համար, Դա այնպիսի մի աջողութիւն էր, որ ոչ ոք, ինչպէս զիւղացիք են խոստովանւում, չէր կարողանում հաւատալ, որ նորից վանքը ջրաղաց է ունենալու Այժմ ջրաղացը տալիս է վանքի գրեթէ տարեկան պարէնը, իսկ այդ ըհչ բան չէ:

Այս մի կողմից, միւս կողմից որոշ չափով օդնութեան է հասնում վեհ, կաթողիկոսը՝ որոշ գումարներ տալով վանքի նորոգութիւնների համար, տեսնելով վանքի ընկած, աննախանձելի կացութիւնը, Խոյ գաւառն էլ միացնում է վանքին, ծիշտ է, Խոյ գաւառի հայ ազգաբնակութիւնը տնտեսապէս ընկած լինելով, չէր կարող խոշոր գումար աալ տարեկան, յամենայն դէպս տուածն էլ մի փոքր բացուած կարող էր ծածկել, Այնպէս որ այս երեք հանգամանքների չնորհիւ վանահայրն սկսում է մի փոքր ազատ շունչ քաշել և սառնութեամբ դիտել շուրջը:

Ներկայ վանահայրը, ճիշտ է, չունի մեծ զարգացում և կրթութիւն, բայց բանուած է գործելու տենչով, նա ունի լաւ ձգտումներ և անկեղծ կնրպով աշխատում է օգուտ տալ վանքին, մի բան անել, եւ պէտք է ասել, նա գործ է չինում, իդուր օրեր չի սպանում:

Ջրաղացը գործի դնելուց յետոյ նա ձեռնարկում է վանքի նորոգութեանը, Զաքարիա եպիսկոպոսի շինած բաժնի մի փոքր մասը քանդուել էր, այդ մասն է նա շինում, փոքր եմասում, բայց մեծ աշխատանք և ծախս է պահանջում: Այժմ թէն վանքը շատ նորոգութեան տեղեր ունի, ինչպէս օր, զանգակատունը, տաճարի դրան վերնը, որ Սիմէոն արքեպիսկոպոսը կիսատ է թողել, և այժմ անձրես է զալիս, քարերի արանգով լցւում է պատերի մէջ և փչացնում է. ասում եմ, նորոգելու շատ տեղեր կան, բայց փող, փող չը կայ:

Այս երկու տարուայ ընթացքում շինում է նաև մի բանի լաւ սենեակներ, իհարկէ, կանոնաւոր սենեակներ, բայց մինչեւ այժմ դեռ չի ծածկել, թէն ամեն ինչ պատրաստ է. առնում է դութան, լծկան եղներ և դոմէչներ, առնում է սայլ և սկսում է կանոնաւոր մշակել վանքի մնացած մի քանի կտոր արտերը և կարգի բերել վանքի քայլայուած տնտեսական դրութիւնը:

—Հ՞ը, ոէս Թաթոս, բ'ը Գէորգ վարդապետը իսկի բան չի կերել վանքից, դիմեցի ես:

— Եաւ կ'ուտէր, համա ուշ հասաւ, հէջ՝ մի չոփ էլ չէին թողել տնապանդները էս ֆաղրի համար:

— Զէ, պ. վարժապետ, պիտի Աստծով խօսենք, էս մարդից շատ գոհ ենք, մարդը շինարար է. էդ ջաղացը ինչ ա, մէկ միլիոն արժի մեզ համար, ասաց տէրտէրը:

Իմ մշտական այցելուները և խօսակիցներն էին տէրտէրը, ոչս Թաթոսը և մի երկու գիւղացի, իհարկէ և վանահայրը, և մեծ մասով մեր խօսակցութիւնը պատում էր վանքի շուրջը:

— Դրուստ է ասում տէրտէրը, աւելացրեց մի գիւղացի, էս մարդը շատ գործող է. տնաշէնը բերնից կտրում է, որպէս զի վանքը կարգի բերի:

Շատ գիւղացիների խօսեցրի, բոլորն էլ գրեթէ, աննշան բացառութեամբ, գոհ էին վանահօրից: Այնպէս որ այժմ շնորհիւ Գէորգ վարժապետի՝ վանքը մի փոքը բարելաւ վիճակի մէջ է: Վանքը այժմ ունի 32 ոչսար, տասը կթան, 15 տաւար, 4-ը կթան կով և մատակ, 4 եղ, 4 գումէշ, մի գութան, մի սայլ, ջրաղաց, մօտ 30 խալվար հող, երկու հատ ձէթհան գործարան, նոյնպէս և հաւեր, բաղեր ևայլն: Մի փոքրիկ միարանութիւն, այնպէս որ այժմ վանքի վիճակը բաւականին բարւոք կարելի է համարել և կարելի է յուսալ, որ հետզհետէ, ժամանակի ընթացքում աւելի ու աւելի կը բարելաւուի:

Բայց վանքի միայնութիւնը սարսափելի է, ապրելը ուղղակի անտանելի: Ընկած մի անկիւն, լեռների մէջ, միանգամայն բացակայում են կանոնաւոր ճանապարհներ, չը կայ փոստ և հեռագիր, գրեթէ ոչինչ եւ իսկապէս շատ ծանր է վանական կեանքը, մանաւանդ այսպիսի պայմանների մէջ: Խեղճերը հընարաւորութիւն չ'ունեն գէթ թերթ ստանալ, իմանալ ինչ է կատարւում արտաքին աշխարհում, ինչ է անցնում-դառնում, և եթէ թերթ էլ ստանում են, իհարկէ սուրհանդակի միջոցով, այն էլ բաւականին ուշ, որ իրանդ թարմութիւնը կորցնում են, թէն նրանց համար էլի թարմ, նոր են լինում:

Այսպէս է վանքի կեանքը. թէն ևս վեց օր մնացի վանքում, և ամեն ինչ նորութիւնն էր ինձ համար, բայց էլի շատ տաղտկալի էին անցնում օրերը, և շատ սրտնեղւում էի:

Վանքի շուրջը, լեռների վրայ կան փաքրիկ և կնղեցիներ, և ենթադրում է, որ դրանք Թադէս առաքեալի չարչարանաց վայրերն են, վանքի առաջ, ընդարձակ գաշտի մէջ, մի շածք ըլրի վրայ երևում է ս. Սանդուխտ կոյսի մատուռը: Փոքը և անպանոյն է այդ մատուռը: Եւ երբ մարդ մտածում է, որ մի շարք դարեր է անցել սրանց վրայով, ակամայ բացագանչում է, որ յամենայն դէպս շատ մեծ է եղել հայ ժողովրդի հաւատը

և ջերմնուանդութիւնը, որ կանգուն է պահել իր սուրբ վայրերը. և այդ պատիւ է բերում հայ ժողովրդին:

Իսկ վանքից աւելի հեռուն, ամբողջ Մակուի խանութեան մէջ յրուած են և աչքի խփում եկեղեցու բեկորներ, քաղաքի մնացորդներ, փլուած շնչարեր, որոնք մի-մի կենդանի վկաներ են հայ ժողովրդի անցեալ փառքի, մի-մի պերճախօս փաստեր են, որ անցեալում այս կողմերը տիրապետող տարրը եղել է հայ ազգարնակութիւնը: Տխուր է այդ բեկորների, հնութեան այդ մնացորդների թողած տպաւորութիւնը Եւ ընդհանրապէս ես հեռացայ վանքից աւելի տիսուր յիշողութիւնների և տպաւորութիւնների տակ...

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ
